Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
12.07.2012թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ 7054
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	1765	26.1
դիմում	3769	53.4
բողոք	1520	21.5
կրկնակի	68	1.3
կոլեկտիվ	49	0.6

2. Վերցված է վերահսկողության՝ ընդամենը 1106

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	896	81.2
բողոք	210	18.9

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	312	4.4
կոմունալ-կենցաղային	16	0.2
շինարարական	29	0.4
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	6	0.08
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	106	1.5
առողջապահության	18	0.2
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2604	37.1
օրենսդրական	105	1.4
քաղ. և որդեգրման հաշվառման	21	0.2
աշխ. և աշխատավարձի	286	4.1
ապարատային		
այլ հարցեր	3534	50.2

սեփականաշնորհում	17	0.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2012Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7054 նամակներից մոտ 26.1%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 21.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 50.2%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 37.1%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.1%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 4.4%-ը առնչվում է բնակարանային, 0.2%-ը կոմունալ-կենցաղային, 0.4%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 50.2.2%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6721-ին տրվել է գրավոր, իսկ 235-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 98-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն